ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի
2017 թվականի հունիսի 19-ի N 141-Ա կարգադրությամբ
ձևավորված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

Արթիկի համայնքապետարան 26-ը հունիսի 2017թ. ժամը 11:00
(ք. Արթիկ , Ազատության հրապարակ 1)
Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Արտաշես Կարախանյան
Հանձնաժողովի անդամներ՝
Հրանտ Ղազոյան , Մարիամ Փանոյան, Ռուզաննա Ավագյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Բաղդասարյան Լարիսա ՝ Գնումների համակարգող

ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կողմից հայտարարված Արթիկ համայնքում աղբավայրի վերածված տարածքի հարթեցման աշխատանքների կատարման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման՝ ՇՄԱՔ-ՀՄԱ-ԾՁԲ-17/61 ծածկագրով, գնման ընթացակարգի հայտերի ներկայացումը իրականացվել է էլեկտրոնային գնումների armeps.am համակարգի միջոցով:
ՇՄԱՔ-ՀՄԱ-ԾՁԲ-17/61 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության վեց հայտ է ներկայացվել:
Գնման առարկան խմբավորված է «2» չափաբաժիններում:
1 չ/բ-ով նախատեսված ծառայության ձեռքբերման համար գնումների պլանով նախատեսված ֆինանսական միջոցները կազմում են 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ, 2 չ/բ-ով նախատեսված ծառայության ձեռքբերման համար՝ 49 500/ քառասունինը հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:
Հայտ ներկայացրած մասնակիցները հանդիսանում են ՀՀ ռեզիդենտ և ԱԱՀ չվճարող:

Հ/Հ	Մասնակցի անվանում	Մասնակցի հասցե
1.	«ՍԵՆ-ԼԵՎ» ՍՊԸ	ք. Մարալիկ, Նոր Թաղ., փ. 6,տ. 11
2.	«ԲԵՍԹ ՔԱԴ» ՍՊԸ	ք. Վանաձոր, Ներսիսյան նրբ. 10/13
3.	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14
4.	«Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ	ք. Վանաձոր, Վարդանանց 23/159
5.	«Տեխպրոյեկտ» ՍՊԸ	ք. Վանաձոր, Մյասնիկյան 3
6.	«ՏԵԽ.ԴՐԱՖՏ» ՍՊԸ	Ք. Երևան, Վ.Վաղարշյան 21/28

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները հետևյալն են ՝

Հ/Հ	Գնման առարկա	Մասնակիցներ	Գին՝ առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/	Գին՝ ներառյալ ԱԱՀ /ՀՀ դրամ/
1	Արթիկ համայնքում աղբավայրի վերածված տարածքի հարթեցման աշխատանքների կատարման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայություն	«ԲԵՍԹ ՔԱԴ» ՍՊԸ	108 000 / մեկ հարյուր ութ հազար/	108 000 / մեկ հարյուր ութ հազար/
		«Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ	1 500 000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/	1 500 000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/
		«Տեխպրոյեկտ» ՍՊԸ	1 650 000 / մեկ միլիոն վեց հարյուր հիսուն հազար/	1 650 000 / մեկ միլիոն վեց հարյուր հիսուն հազար/
		«ՏԵԽ.ԴՐԱՖՏ» ՍՊԸ	1 400 000 / մեկ միլիոն չորս հարյուր հազար/	1 400 000 / մեկ միլիոն չորս հարյուր հազար/

Չ/Հ	Գնման առարկա	Մասնակիցներ	Գին՝ առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/	Գին՝ ներառյալ ԱԱՀ /ՀՀ դրամ/
2	Արթիկ համայնքում աղբավայրի վերածված տարածքի հարթեցման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայություն	«ՍԵՆ-ԼԵՎ» ՍՊԸ	14 000 / տասնչորս հազար/	14 000 / տասնչորս հազար/
		«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	1 790 000 /մեկ միլիոն յոթ հարյուր իննսուն հազար/	1 790 000 /մեկ միլիոն յոթ հարյուր իննսուն հազար/
		«Տեխպրոյեկտ» ՍՊԸ	1 100 000 /մեկ միլիոն մեկ հարյուր հազար/	1 100 000 /մեկ միլիոն մեկ հարյուր հազար/
		«ՏԵԽ.ԴՐԱՖՏ» ՍՊԸ	1 450 000 / մեկ միլիոն չորս հարյուր հիսուն հազար/	1 450 000 / մեկ միլիոն չորս հարյուր հիսուն հազար/

Գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվեց, որ «ԲԵՍԹ ՔԱԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին: «ՍԵՆ-ԼԵՎ» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված Տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Գնահատող հանձնաժողովի կողմից քննարկվեց վերը թվարկված հանգամանքները և կայացվեց որոշում՝

1. 1 չ/բ համար ներկայացված հայտի հիման վրա «ԲԵՍԹ ՔԱԴ» ՍՊԸ-ի հայտը մերժել:
2. 2 չ/բ համար ներկայացված հայտի հիման վրա «ՍԵՆ-ԼԵՎ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Որոշումը ընդունվել է կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մյուս մասնակիցների՝ «Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ-ի, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի, «ՏԵԽ.ԴՐԱՖՏ» ՍՊԸ-ի և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի, կողմից ներկայացված հայտերը՝ ոչ գնային պայմանների մասով, բավարարում են հրավերի տեքստի պահանջներին:

Բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնումների պլանով նախատեսված ֆինանսական միջոցները:

Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով բավարար գնահատված բոլոր մասնակիցների («Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ-ի, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի, «ՏԵԽ.ԴՐԱՖՏ» ՍՊԸ-ի և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի) հետ վարվելու են միաժամանակյա բանակցություններ՝ առաջարկված գների նվազեցման շուրջ:

Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օր է սահմանվում հունիսի 28-ը, ժամը 11:00-ն, վայրը՝ ք. Արթիկ, Արթիկի համայնքապետարան, Ազատության հրապարակ թիվ 1 հասցեում:

Որոշումը ընդունվել է կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Կարախանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Հ.Ղազոյան

_____ Մ.Փանոյան

_____ Ռ.Ավագյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ. Բաղդասարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի
2017 թվականի հունիսի 21-ի N 145-Ա կարգադրությամբ
ձևավորված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Արթիկի համայնքապետարան 28-ը հունիսի 2017թ. ժամը 11:00
(ք. Արթիկ , Ազատության հրապարակ 1)
Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Արտաշես Կարախանյան
Հանձնաժողովի անդամներ՝
Հրանտ Ղազոյան , Ռուզաննա Ավագյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Բաղդասարյան Լարիսա ՝ Գնումների համակարգող

ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված «Արթիկ համայնքում աղբավայրի վերածված տարածքի հարթեցման աշխատանքների կատարման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների՝ ՇՄԱՔ-ՀՄԱ-ԾՁԲ-17/61 ծածկագրով», գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի N 2 նիստում արձանագրվել էր, որ բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնումների պլանով նախատեսված ֆինանսական միջոցները: Գնահատող հանձնաժողովի կողմից կայացվել էր որոշում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին («Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ, «ՏԵԽ.ԴՐԱՖՏ» ՍՊԸ և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ) հրավիրել մասնակցելու միաժամանակյա բանակցությունների՝ առաջարկված գների նվազեցման շուրջ: Հրավիրված մասնակիցներից ներկայացել էին «Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ-ի և «ՏԵԽ.ԴՐԱՖՏ» ՍՊԸ-ի լիազոր ներկայացուցիչները (լիազորագրերը կցվում են), «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի տնօրենը: «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ մասնակիցը չէր ներկայացել բանակցությունների նիստին:

Գնահատող հանձնաժողովի կողմից քննարկվեց վերը թվարկված հանգամանքները և կայացվեց որոշում՝

1. Բանակցությունների նիստին չներկայանալու պատճառով 2 չ/բ համար հայտ ներկայացրած «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի հայտը մերժել:
2. 1-ին չափաբաժնի մասով բանակցել «Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ, «ՏԵԽ.ԴՐԱՖՏ» ՍՊԸ մասնակիցների հետ, և 2-րդ չափաբաժնի մասով բանակցել «Տեխպրոյեկտ» ՍՊԸ և «ՏԵԽ.ԴՐԱՖՏ» ՍՊԸ մասնակիցների հետ:

Որոշումը ընդունվել է կողմ՝ 3, դեմ՝ 0:

Այնուհետև գնահատող հանձնաժողովը անցավ բանակցությունների փուլին:

1 չ/բ-ի մասով (Արթիկ համայնքում աղբավայրի վերածված տարածքի հարթեցման աշխատանքների կատարման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայություն) առաջարկված գների նվազեցման շուրջ բանակցությունները ընթացան «Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ, «ՏԵԽ.ԴՐԱՖՏ» ՍՊԸ և «Տեխպրոյեկտ» ՍՊԸ մասնակիցների միջև:
Բանակցությունները ընթացան երկու փուլով:
Առաջին և Երկրորդ փուլերում մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները հետևյալն են.

Մասնակցի անվանում	Գնային առաջարկ / I փուլ	Գնային առաջարկ / II փուլ
«Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ	100 000 / մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ	98 000 /ինՆսունութ հազար/ ՀՀ դրամ
«ՏԵԽ.ԴՐԱՖՏ» ՍՊԸ	99 500 / ինՆսունինը հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ	97 000 /ինՆսունյոթ հազար/ ՀՀ դրամ
«Տեխպրոյեկտ» ՍՊԸ,	99 000 / ինՆսունինը հազար/ ՀՀ դրամ	99 000 / ինՆսունինը հազար/ ՀՀ դրամ

Մասնակիցների կողմից այլ գնային առաջարկներ չգրանցվեցին:

Գնահատող հանձնաժողովի կողմից կայացվեց որոշում՝

1. 1-ին չ/բ մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվում «ՏԵԽ.ԴՐԱՖՏ» ՍՊԸ-ն, 2-րդ տեղ՝ «Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ-ն և 3-րդ տեղ՝ «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ն:
2. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարել հարցում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ՏԵԽ.ԴՐԱՖՏ» ՍՊԸ-ի, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Որոշումը ընդունվել է կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 չ/բ-ի մասով (Արթիկ համայնքում աղբավայրի վերածված տարածքի հարթեցման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայություն), առաջարկված գների նվազեցման շուրջ բանակցությունները ընթացան «ՏԵԽ.ԴՐԱՖՏ» ՍՊԸ և «Տեխպրոյեկտ» ՍՊԸ մասնակիցների միջև: Բանակցությունները ընթացան մեկ փուլով:
Մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները հետևյալն են.

Մասնակցի անվանում	Գնային առաջարկ / I փուլ
«ՏԵԽ.ԴՐԱՖՏ» ՍՊԸ	49 400 / քառասունինը հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ
«Տեխպրոյեկտ» ՍՊԸ,	49 000 / քառասունինը հազար / ՀՀ դրամ

Մասնակիցների կողմից այլ գնային առաջարկներ չգրանցվեցին:
Գնահատող հանձնաժողովի կողմից կայացվեց որոշում

1. 2-րդ չ/բ մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվում «Տեխպրոյեկտ» ՍՊԸ -ն, 2-րդ տեղ՝ «ՏԵԽ.ԴՐԱՖՏ» ՍՊԸ-ն:
2. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարել հարցում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Տեխպրոյեկտ» ՍՊԸ -ի, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Որոշումը ընդունվել է կողմ՝ 3, դեմ՝ 0:

Մասնակիցների կողմից գնահատող հանձնաժողովին հարցեր և առաջարկություններ չներկայացվեցին:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կարախանյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հ.Ղազոյան

Մ.Փանոյան

Ռ.Ավագյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Բաղդասարյան